եանը անջատ քաղաքականութիւն է վարում անգլիական միսիայի հետ, Կ. Կոմիտէն, Ֆ. Ե-ի եւ Ֆ. Մ-ի միջոցով զգուշացնում է նրան, որ վերջ տայ իր բանակցութիւններին:

Այդ յայտարարութիւնը ազդում է Գերասիմ աղայի վրայ, որ դադարեցնում է իր բանակցութիւնները անգլիական միսիայի հետ:

Այդ միսիան մի առժամանակ մնում է Շուշի:

Բաղուից միսիայի հետ եկել էին Զանգեզուրի Ազգային Խորհրդի անդամները եւ իրենց հետ մէկ միլիոն ռուբլի դրամ էին բերել:

Այդ դրամը նրանք Բաղուի ազգային մարմինների միջոցով, Զօրավար Բաղրատունուցն էին ստացել, Զանգեզուրի Ազգային Խորհրդի կարիքների համար:

Շուշում ընկերները այդ դումարից հարիւր հազար ռուբլի են յատկացնում Ղարաղըշլաղի գաղթականութեանը եւ դրամի բաշխումը յանձնում են Հայրապետ Մուսայէլեանին. իսկ իրենք ճանապարհւում են Գորիս:

Հայրապետ Մուսայէլեանը, Ղուկասեան դպրոցի շէնքում այդ դրամի մի մասը բաժանում է գաղթականներին անձամբ, իսկ միւս մասի բաշխումը յանձնում է դպրոցի ուսուցիչ Կարապետ Նարինեանին:

Այդ օրերին Ղարաղըշլաղի գաղթականութեան մէջ ուժեղ տիֆ կար եւ օրական մի քանի հոգի մահանում էին:

Դրամը բաժանելու ժամանակ, երկուսն էլ վարակւում են եւ չանցած ութ օր մահանում են:

Կորուստը շատ մեծ էր: Հայրապետ Մուսայէլեանը անգլիացու պէս շատ խորը կը մտածէր եւ շատ սառը կը դատէր: Երբեք իր արած առաջարկների մէջ չէր սխալուել եւ գիշեր ու ցերեկ, առանց յոգնելու ու դադարի կ'աշխատէր: Նա թէ Ղուկասեան դպրոցի տեսուչն էր, թէ Ղարաբաղի բոլոր մարմինների — յեղափոխութիւնից յետոյ — նախագահն էր, թէ՝ Հ. Յ. Դ. Ազգային Կ. Կոմիտէի նախագահն էր եւ թէ՛ մի շարք հասարակական մարմինների անդամ էր:

Հայրապետի կատարած գործը, կուսակցական կեանքը մի անդամից չի կարելի պատկերացնել: Պարաք է մնում նրա մօտիկ եւ կեանքին մանրամասնօրէն ծանօթ ընկերների վրայ, լրիւ կենսագրականը տալու: Իսկ Ղարաբաղի հայ ժողովուրդը ու մանաւանդ Դաշնակցական ընկերները մի անելիք ունին՝ Հայրապետի յիշատակը վառ պահել իրենց սրտերում:

Երկրորդ զոհը Կարապետ Նարինեանն էր, որ նոյնպէս Դաշնակցութեան մէջ եւ Ղարաբաղում որոշ աշխատանքներ ունի կատարած:

Այս երկու ընկերների կորուստը չափից դուրս զգալի էր Շուշուայ ընկերների համար:

Ղարաբաղի Ժամանակաւոր Խորհուրդ կոչեցեալ մարմինը մի անհամաձայնութեան օրգան էր, որ չէր կարողանում իր գլուխը հաւաքել:

Սոկրատ բէկը աշխատում էր ինքը լինել ընդհանուր հրամանատար. իսկ միւս հրամանատարները, որոնք աւելի փորձուած էին, չէին ցանկանում Սոկրատ բէկին:

Այդ անհամաձայնութիւններին վերջ տալու համար, Ազատաժի Կ. Կոմիտէն որոշում է Ժամանակաւոր Խորհրդի միջոցով համագումար հրաւիրել, որպէսզի նախ՝ մի հեղինակաւոր մարմին ընտրուի եւ երկրորդ՝ անգլիական միսիայի ներկայութեամբ, բովանդակ Ղարաբաղի հայ ժողովրդի կամքը եւ ցանկութիւնը հանդէս բերուի իր քաղաքական դատի պաշտպանութեան համար:

Այդ նպատակով էլ, 1919 թ. Փետրուար 10-ին Շուշում 4-րդ համագումարն է հրաւիրւում, որտեղ եւ ընտրւում է Ազգային Խորհուրդ՝ նախ՝ Ասլան Շահնազարեանի եւ յետոյ Եղիշէ Իշխանեանի նախագահութեամբ:

Այդ համագումարին Ադրբէյջանի կառավարութիւնը, Շուշուայ անգլիական միսիայի միջոցով առաջարկում է ներկայացուցիչներ ուղարկել Բաղու՝ Ադրբէյջանի Պարլամենտին մասնակցելու համար:

4-րդ համագումարի ամբողջ պատկերը դժուարանում եմ տալու, որովհետեւ փաստաթղթեր չունիմ ձեռքիս տակ: Միայն այսքանը ասեմ, որ չորրորդ համագումարը որոշում է Ղարաբաղը համարել Հայաստանի անբաժան մասը, ոչ մի կերպ չընդունել Ադրբէյջանի իշխանութիւնը, եւ ոչ էլ ներկայացուցիչներ ուղարկել նրա պարլամենտին: